ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

24 հունիսի 2020 թվական

4-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 5-ՐԴ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

ՄՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 20.45

Հայկ Մարության

-Ավագանու հարգելի անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել են ավագանու 6 անդամ՝

Սիփան Ասատրյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Մեսրոպ Պապիկյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Սաթենիկ Մկրտչյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Արման Անտոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Արսեն Կարապետյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Լևոն Զաքարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն:

Առաջին հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սիփան Ասատրյան, խնդրեմ:

Սիփան Ասատրյան

-Հարցս վերաբերում է քաղաքի մատչելիությանը: Այս պարագայում ցանկանում եմ հասկանալ, թե քաղաքի թեքահարթակներն ի՞նչ չափորոշիչներով են կառուցվում: Արդյոք կա՞ չափորոշիչ և փաստաթուղթ, որով առաջնորդվում ենք, այսինքն՝ թեքության, լայնության, բարձրության չափորոշիչներ, որովհետև հատկապես նոր կառուցվող թեքահարթակների հետ

կապված կան բողոքներ: Դժգոհությունները մասնավորապես կապված են թեքության հետ. մարդիկ չեն կարողանում ինքնուրույն օգտվել և օգնության են դիմում այլ մարդկանց: Այսինքն, ծախսվում է գումար և մատչելիության առումով ցանկալի արդյունք չի ստացվում: Ունենք արդյոք չափորոշիչներ, որոնցով առաջնորդվում ենք:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ Գրիգոր Հարությունյանը:

Գրիգոր Հարությունյան

-Բոլոր թեքահարթակները կառուցվում են միայն չափորոշիչներով: Դրանք նախորդ տարիներին կառուցվել են համայնքի միջոցներով, շինբարեկարգման ծրագրով: Այս տարի այդ աշխատանքների կատարումը փոխանցվել է վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմեր, սակայն մենք նույնպես մի քանի հատ կառուցել ենք: Գոյություն ունի նորմատիվ. ըստ չափորոշիչի՝ 10 սմ բարձրությամբ և 1 մ երկայնությամբ դրվում է թեքահարթակը: Չափորոշիչների խախտում դեռ չունենք:

Սիփան Ասատրյան

-Խոսքս մասնավորապես վերաբերում է Ֆուչիկի փողոցին, անձամբ չեմ եղել այնտեղ, բայց պատրաստվում եմ այցելել և մոնիթորինգ կատարել: Մարգարյան և Աբելյան փողոցների հատվածին է վերաբերում, որը, կարծես, նոր է վերանորոգվել: Անձամբ կայցելեմ՝ տեսնելու այդ չափանիշները պահպանվել են, թե ոչ:

Երկրորդ հարցս վերաբերում է վերգետնյա անցումներին: Ցանկանում եմ իմանալ պատրաստվում ենք ապագայում կառուցել վերգետնյա անցումներ, թե ոչ: Ինչքանով տեղեկացված եմ, Մյասնիկյան պողոտայում պետք է կառուցվեր: Այդ պարագայում ևս մատչելիությունը հիմնականում չի պահպանվում. եթե կառուցվում է վերգետնյա անցում, որտեղ կան աստիճաններ, այնտեղ, բնականաբար, խախտվում է այդ նորմը: Եթե կառուցվելու է վերգետնյա անցում, նախագծում արդյոք կլինի վերելակ, թե ոչ:

Հայկ Մարության

-Ցանկանում եմ նշել, որ միջազգային կազմակերպությունների, բանկերի հետ համագործակցության արդյունքում կառուցված ճանապարհների բոլոր վերգետնյա անցումներն ապահովված են վերելակներով:

Հարցին առավել մանրամասն կպատասխանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ Գրիգոր Հարությունյանը:

Գրիգոր Հարությունյան

-Տվյալ պահին ունենք վերգետնյա անցում կառուցելու 2-3 հաստատված նախագիծ: Մյասնիկյան պողոտայի վերգետնյա անցման նախագիծը պատրաստ է, ունենք և՛ վերելակով նախատեսված ծավալաթերթերը, և՛ առանց վերելակի: Տվյալ պահին այդ վերգետնյա անցում չի կառուցվելու, որովհետև նպատակային չի համարվել, քանի որ լուսացույց է դրված, բնակչության պահանջները մասամբ կատարված է:

Հայկ Մարության

-Հարցին կանդրադառնա քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը:

Հրաչյա Սարգսյան

-Երկու նախագիծ ենք ունեցել, մեկը՝ Թբիլիսյան խճուղում, մյուսը՝ Մյասնիկյան պողոտայում: Թբիլիսյան խճուղու վերգետնյա անցման հետ կապված, եթե կհիշեք, պարոն Պապիկյանը գրել էր, որ այդտեղ խնդիր կա: Ուսումնասիրեցինք, հասկացանք, որ նախագիծն ավելի շուտ էր եղել, դրանից հետո այդտեղ լուսացույց էր դրվել և վերգետնյա անցում կառուցելը նպատակահարմար չէր: Մյասնիկյան պողոտայի համար նույնպես նախագիծ կա, պլանավորում էինք այս տարի կառուցման աշխատանքներն սկսել, բայց անցյալ տարի, հրատապությունից ելնելով, լուսացույց տեղադրվեց, որն արդարացնում է իրեն: Դրանից ելնելով, Մյասնիկյան պողոտայի վրա վերգետնյա անցում կառուցելու հարցն այս պահի դրությամբ օրակարգից դուրս է:

Հայկ Մարության

-Այդ դեպքում, ձայնային ազդանշան ունե՞նք լուսացույցի վրա:

Հրաչյա Սարգսյան

-Անկեղծ ասած, դժվարանում եմ պատասխանել:

Հայկ Մարության

-Ոչ չունենք, այդ դեպքում պետք է առնվազն ձայնային ազդանշան ավելացնել, որպեսզի համապատասխանի մեր ասածներին:

Սիփան Ասատրյան

-Ձայնային ազդարարման համակարգերի վերաբերյալ նշեմ, որ հետաքրքրվել եմ, հետիոտնային կանչով լուսացույցների մասին է խոսքը, վերջին շրջանում տեղադրված բոլոր լուսացույցներն ունեն ձայնային ազդարարման սարքեր: Պարզապես չգիտեմ, ինչու են դրանք երբեմն աշխատում, երբեմն ոչ: Օրինակ, մի քանի օր առաջ, Նալբանդյան փողոցի հատվածում, հաշմանդամության նշանը կա, համոզված եմ, որ ձայնային համակարգն էլ կա,

բայց տվյալ պահին չէր աշխատում: Չգիտեմ այդ հարցը մեր ենթակայության տակ է, թե ոստիկանության, բայց կցանկանայի, որ ուշադրություն դարձնեն:

Հայկ Մարության

-Պարոն Սարգսյան, փորձենք հասկանալ, ձայնային այդ ազդանշանները, եթե ի սկզբանե կան, ինչու՞ են փչանում և այդ դեպքում ով պետք է դրանք նորոգի, մենք, թե ոստիկանությունը:

Հրաչյա Սարգսյան

-Պարոն քաղաքապետ, Երևան համայնքը քաղաքացիների անցումն ապահովելու համար նախնական 10 լուսացույց էր տեղադրել: Հետագայում, ուսումնասիրության արդյունքում, Ձեր հանձնարարականի հիման վրա ևս 16 լուսացույց տեղադրվեց: Բոլոր այդ լուսացույցերն ունեն ազդարարման համակարգ, այդ մասով համայնքը պետք է սպասարկի, իսկ ընդհանուր առմամբ լուսացույցերը, գծանշումները և մնացած նշանները ոստիկանության լիազորությունների տիրույթում են: Պարզապես, պետք է ճշտել պարոն Ասատրյանի կողմից նշած լուսացույցն ում հաշվեկշռում է գտնվում:

Հայկ Մարության

-Ճիշտ կլինի ստուգայցեր իրականացնենք, տեսնենք ինչ խնդիրներ կան և կարգավորենք այդ հարցերը:

Հրաչյա Սարգսյան

-Կարող ենք գույքագրել և ներկայացնել, քանի որ ՀՀ կառավարության կողմից ոստիկանությանը գումար է հատկացվում սպասարկման համար: Համատեղ գույքագրում անենք և ներկայացնենք, որպեսզի վերականգնեն ազդանշանային համակարգը:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Մեսրոպ Պապիկյան, խնդրեմ:

Մեսրոպ Պապիկյան

-Ինչպես գիտեք, օրեր առաջ տեղի ունեցավ Երևան քաղաքի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի ու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի համատեղ նիստը, որի ժամանակ քննարկվեց 33-րդ թաղամասի՝ «Ֆիրդուսի» կառուցապատման հարցը: Քանի որ խնդիրը հանրային լայն հետաքրքրություն ունի, կազմակերպեցինք նման քննարկում: Հարցը, բնականաբար, լինելով բազմաշերտ, տարբեր կարծիքներ հնչեցին: Նիստի ժամանակ Երևանի գլխավոր ճարտարապետ պարոն Մեսչյանը, ելույթի ընթացքում, անհասցե սաբոտաժի մեղադրանք հնչեցրեց, այնուհետև ելույթն ավարտելուց հետո, նա իր աշխատակազմի հետ ցուցադրաբար հեռացավ նիստերի դահլիճից: Ես դա համարում եմ անընդունելի, ոչ

գործընկերային արարք: Կցանկանայի նաև Ձեր կարծիքը և գնահատականն իմանալ նման վերաբերմունքի հետ կապված:

Հայկ Մարության

-Ես կարծում եմ, որ ճիշտ կլինի պարոն Մեսչյանին այդ հարցն ուղղել, ոչ թե ինձ: Ես Երևանի քաղաքապետն եմ, պարոն Մեսչյանը, բացի նրանից որ այսօր ի պաշտոնե Երևանի գլխավոր ճարտարապետն է, իմ կողմից շատ հարգված անձ է, երևանցի, ՀՀ քաղաքացի: Այնպես, որ չեմ ցանկանա այս պահին այդ հարցը քննարկել, ճիշտ կլինի հարցն ուղղել պարոն Մեսչյանին, որովհետև միայն ինքը կարող է իր զգացմունքներն ու էմոցիաները բացատրել, ոչ ոք դա չի կարող անել: Վստահ եմ, որ դրա հետ կապված դրդապատճառներն ինքն ունի, կարծում եմ դեռ առիթ կլինի այդ հարցն իրեն ուղղելու համար:

Մեսրոպ Պապիկյան

-Քանի որ Դուք եք Երևանի քաղաքապետը, Ձեր աշխատակազմն է, այդ իսկ պատճառով, կարծեցի որևէ կարծիք կարող եք հայտնել Երևանի ավագանու հանձնաժողովի նիստի ժամանակ նման արարքի մասին:

Հայկ Մարության

-Արդեն ասացի, որ կարծում եմ, ճիշտ կլինի այդ հարցն ուղղել պարոն Մեսչյանին:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Զաքարյան, խնդրեմ:

Լևոն Զաքարյան

-Առաջին հարցս վերաբերում է «Կորեայի ձոր» կոչվող տարածքին: Ես՝ որպես ավագանու անդամ, քաղաքացիներից պարբերաբար այդ տարածքից նկարներ եմ ստանում: Վերջին նկարն ստացել եմ այսօր, որտեղ ֆիքսված է 3 բեռնատար, որոնք աղբ են թափում այդտեղ, կարող եմ ցույց տալ: Հիշում եմ նաև, որ վերջին շրջանում բավականին մեծ ծավալի մաքրման աշխատանքներ արեցինք, բայց շարունակվում է այս հարցը մնալ: Սա իրապես լուրջ խնդիր է դառնում, որովհետև եթե մենք կամ համապատասխան մարմինները չեն կարողանում կանխել այս ապօրինի գործողությունները, ապա անիմաստ է դառնում նաև այդ տարածքի մաքրման աշխատանքները:

Ցանկանում եմ հարցնել և հասկանալ արդյոք չկա մեկ այլ տարբերակ, ոստիկանության հետ համագործակցության արդյունքում, ավելի արդյունավետ միջոց կիրառենք այդ ամենը կանխելու համար: Սա իսկապես արհամարհանք է, ինձ համար դա հանցագործություն է, որը շարունակական բնույթ է կրում: Կցանկանայի իմանալ Ձեր կարծիքը:

Հայկ Մարության

-Ձեզ հետ ամբողջապես համաձայն եմ: Կարծում եմ ամենաճիշտ մեթոդը կլինի այն, որ այն տնտեսվարողները կամ անհատները, ովքեր այդ գործողությունը կատարում են և այդ պահին ոստիկանությունն արձանագրում է, տուգանքը լինի 500.000, 1.000.000 կամ 2.000.000 դրամ: Քանի որ ոչ ոք չի կարող ասել, որ ընտանիքը պահելու համար աղբը թափում է այս տարածքում: Մեկ անգամ, որ տուգանվի, այլևս ո՛չ ինքը, ո՛չ իրեն ճանաչող որևէ անձ, ով այդ դեպքի մասին իմանա, այդ տարածքին չի մոտենա: Ես կարծում եմ, լուծումը դա կարող է լինել: Մենք, վարչական շրջանի ղեկավարը, ոստիկանության հետ համատեղ պարբերաբար ստուգայցեր ենք անում այդ տարածքում: Կարող ենք տեսախցիկներ տեղադրել, բայց առանց տուգանքի բարձրացման, հարցը լուծում չի ստանա: Ես կողմ կլինեմ մինչև 1.000.000 դրամ տուգանք սահմանվի, յուրաքանչյուր նման վայրում, բնության գրկում, մասնավորապես՝ շինաղբ թափելու դեպքում:

Պարոն Սարգսյան, հանձնարարենք աշխատակազմի տրանսպորտի վարչությանը, ճանապարհային ոստիկանության հետ ուսումնասիրել, որտեղ ինչ փոփոխություն պետք է անել այդ գումարի չափի հետ կապված, իրականացնենք դա: Տուգանքի չափը սահմանելով 1.000.000 դրամ՝ կարելի է 24 ժամ վերահսկել տարածքը: Վստահ եմ, որ վարչական շրջանի ղեկավարի կողմից մարդ կնշանակվի 24 ժամ տարածքը վերահսկելու համար, բայց այն պայմանով, որ այդ գումարը փոխանցվի համայնքային բյուջե, ոչ թե պետական բյուջե: Պետական բյուջե փոխանցելու դեպքում, պետական մարմինները պետք է վերահսկեն:

Հարցին կանդրադառնա քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը:

Հրաչյա Սարգսյան

-Պարոն քաղաքապետ, կարծքում եմ, հաճախ կլինեն դեպքեր, որ մարդիկ իրենց անունով սեփականություն չեն ունենա: Այսինքն 1.000.000 դրամով կտուգանվեն և չեն կարողանա վճարել: Կարծում եմ, պարզապես, այդ ավտոմեքենան պետք է դիտարկվի որպես հանցագործության գործիք և առգրավվի: Դատական նիստ տեղի կունենա, որտեղ մինչև դատարանի կողմից որոշում կայացնելը, այդ ավտոմեքենան կմնա պահպանվող հատուկ վայրում: Կարծում եմ դա ավելի մեծ պատիժ կլինի: Տնտեսվարողները ևս կվախենան, որ իրենց շինարարությունը կամ տնտեսական գործունեությունն իրականացնելիս, բացի նրանից, որ կտուգանվեն, նաև իրենց ավտոմեքենան կարող է ամիսներով կամ տարիներով, որպես հանցագործության գործիք, պահպանման հատուկ վայրում կանգնած լինի: Կարծում եմ դա նույնպես կարող է ինչ-որ զսպող գործիք լինել:

Հայկ Մարության

-Պարոն Սարգսյան, համամիտ եմ Ձեզ հետ, բայց վստահ եմ, որ շատ ընկերություններ կան, ի զարմանս ինձ, որ կառուցապատողներ են: Կարծում եմ այդ ընկերության համար էլ 1.000.000 դրամը փոքր թիվ չէ, մի քանի դեպքից հետո, արդեն կզսպեն իրենց: Ես գիտեմ մի քանի ընկերություն, որոնց անունները չեմ ցանկանում տալ, որ այդտեղ շինաղբ են թափել, որոնք գործող ընկերություններ են և բավականին ակտիվ գործունեություն են ծավալում:

Ամեն դեպքում, խնդրում եմ հանձնարարական տվեք՝ կապ հաստատեն ճանապարհային ոստիկանության հետ, մեր իրավաբանական վարչության հետ քննարկեն: Հասկանանք ինչ կարող ենք անել, սկսենք այդ գործընթացը:

Լևոն Զաքարյան

-Իմ կարծիքով, այս պահին ոստիկանությունը մեծ կամք չի դրսևորում այդ հարցում: Իմ խորին համոզմամբ, եթե քաղաքացին օրվա ընթացքում կարողանում է մի քանի նկար ֆիքսել, ապա ոստիկանությունը, հատկապես, որ մի քանի անգամ ազդակներ է ստացել, որ այդտեղ նման անօրինականություն է կատարվում, պարզապես, պետք է հերթապահություն սահմանի: Նման գործողությունների դեպքում, տեղում, իրենց իրավունքների և լիազորությունների շրջանակում իրականացնեն այն, ինչ պարտավոր են:

Երկրորդ հարցս վերաբերում է Ջոն Կիրակոսյանի անվան հ. 20 դպրոցի հարակից հատվածին՝ այն աստիճաններին, որոնք դպրոցից իջնում են մինչև Չարենցի փողոց: Հարցում էի արել, որին ի պատասխան գրություն եմ ստացել, որ Կենտրոն վարչական շրջանի 2020թ. ծրագրերով աշխատանքներ նախատեսված չեն: Ցանկանում եմ տեղեկանալ գուցե քաղաքապետարանն ինչ-որ ծրագիր ու՞նի, եթե ոչ: Խնդրում եմ, գոնե «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ին ասել, որ ուշադրություն դարձնեն: Վերջերս եմ եղել տեղում, շատ տխուր վիճակ էր. ժամանակավոր լուծման մասին է խոսքը, կարելի է մի փոքր բարեկարգել, քանի որ և՛ կանաչապատումն է շատ վատ վիճակում, և՛ բավականին բարեկարգման աշխատանքների կարիք կա, բայց դրանք շատ մեծ ծավալի չեն, ուղղակի գեղեցկացնել է պետք:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը:

Հրաչյա Սարգսյան

-Ինչքանով, որ ես տեղյակ եմ այդ տարածքը մասնավոր է և գրավադրված է եղել Երևանի բանկերից մեկում, որը սնանկ է ճանաչվել: Եթե չեմ սխալվում ինչ-որ բանկում դա որպես իրենց սեփականություն է արդեն, այսինքն՝ դա համայնքի գույքը չէ: Սա իմ ունեցած տեղեկություններով, բայց քանի որ դիմել եք, հարցում կանենք Կադաստրի կոմիտե,

հասկանանք, եթե դա համայնքի սեփականությունն է, ապա նախագիծ կպատվիրենք, որպեսզի բարեկարգում իրականացնենք: Այնուամենայնիվ, ինչքանով ես տեղյակ եմ, դա համայնքային սեփականություն չէ, մասնավոր սեփականություն է և գտնվում է ինչ-որ բանկի հաշվեկշռում:

Լևոն Զաքարյան

-Պետք է խնդրեմ, եթե կարելի է ճշտել: Հետաքրքիր է, որ ժամանակին աստիճանները նույնպես սեփականացվել են: Ամեն դեպքում, ես կարծում եմ, որ եթե անգամ սեփականություն է, կանաչապատման մասով չեմ կարծում, որ որևէ մեկը դեմ կլինի, գոնե ոռոգեն այն ինչ կա, որովհետև տարածքը չորանում է:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյան, խնդրեմ:

Արման Անտոնյան

-Նոր կառուցվող ճանապարհներում և ճեմուղիներում արդյոք նախատեսվում է ունենալ հեծանվային առանձնացված ուղիներ: Եթե նախատեսվում են, ապա որոնք են դրանք և եթե ոչ՝ ինչու՞:

Հայկ Մարության

-Դավթաշեն-Աշտարակ ճանապարհահատվածում հեծանվային առանձնացված ուղի նախատեսված չէ, որովհետև այդ հատվածում արագընթաց երթևեկություն է կազմակերպվում: Միգուցե այդ առումով վտանգ կա կամ տեխնիկական առաջադրանքի մեջ նման պահանջ չկա:

Հարցի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն կներկայացնի Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը:

Հրաչյա Սարգսյան

-Դավթաշեն-Աշտարակ ճանապարհահատվածում հեծանվային առանձնացված ուղի նախատեսված չէ: Ես կարծում եմ, որ ի սկզբանե մոտեցումն այն էր, որ նոր կառուցվող ճանապարհը՝ հյուսիս-հարավի այն հատվածն է, որով պետք է շրջանցել Երևան համայնքը: Տրամաբանությունն այնպես էր, որ ճանապարհը պետք է ապահովեր ավելի շատ միջմարզային ուղևորափոխադրումները, քան Երևան համայնքի տարբեր վարչական շրջաններից ուղևորահոսքը:

Խնդրում եմ Ձեր փորձը և մասնագիտական հմտությունները գրավոր ներկայացնել: Պատրաստ ենք ներկայացնել նախնական տեղեկատվություն և Դուք աջակցեք, որպեսզի նոր կառուցվող ճանապարհների վրա նախատեսենք առանձնացված հեծանվային ուղիներ:

Արման Անտոնյան

-Ես՝ որպես հեծանվային ենթակառուցվածքի քիչ թե շատ գիտակ մարդ, գտնում եմ, որ Երևանի պայմաններում առավել նպատակահարմար է ունենալ հեծանվային առանձնացված ճանապարհ, այլ ոչ թե գծանշում: Ճանապարհների վրա հեծանվորդների համար առանձնացնելով հեծանվային ուղի՝ կապահովենք անվտանգ երթևեկություն: Ես Ձեզ հակընդեմ առաջարկ եմ անում. եթե նմանատիպ ճանապարհներ կամ ճեմուղիներ են նախատեսվում կառուցել, ապա ի սկզբանե հաշվի առեք այդ գործոնը: Պատրաստակամություն եմ հայտնում ներգրավվել այդ աշխատանքներում:

Պարոն քաղաքապետ անդրադառնամ երկրորդ հարցին. Երևանի ավագանու 26.05.2020թ. նիստին հարց բարձրացրեցի Ազատության հրապարակի հարակից այգում օբյեկտների ամբողջական ապամոնտաժման և Ազատության հրապարակի էսթետիկ տեսքի վերականգնման գործընթացի վերաբերյալ: Դուք նշել էիք, որ Ազատության հրապարակի հարակից այգում օբյեկտների 2-րդ փուլի ապամոնտաժման գործընթացի վերաբերյալ կհրավիրեք խորհրդակցություն:

Կցանկանայի Ազատության հրապարակում վարձակալական հիմունքներով գործող խաղերի և հեծանիվների առկայությունը բացառել՝ պայմանավորված անվտանգության գործոնով, քանի որ չեն պահպանվում անվտանգության նորմերը: Ազատության հրապարակում երեխաները և հետիոտները հաճախակի բախվում են հեծանիվներին, բացի դրանից համավարակի պայմաններում դրանց գործունեությունն առավել թիրախային և վտանգավոր է:

Հայկ Մարության

-Պարոն Անտոնյան, հայտարարվել էր նախագծման մրցույթ: Նախատեսվող աշխատանքներում ներառված է Մաշտոցի-Սայաթ-Նովայի պողոտաների հատվածը: Նախագծման լավ աշխատանքներ ներկայացնող ընկերության համար, որպես խրախուսանք սահմանվել էր սիմվոլիկ 3 միլիոն դրամ: Հայտարարված մրցույթի ժամկետն ավարտվել էր և մասնակից չլինելու պատճառով մրցույթը չէր կայացել: Մրցույթի վերաբերյալ իրականացվել էր առավելագույն իրազեկում: Միգուցե, կարելի էր մրցույթի վերաբերյալ տեղեկատվությունը տարածել առավել լայն շրջանակներում՝ նախատեսելով ավելի մեծ գումար: Մրցույթի հայտարարման վերաբերյալ օրենքով սահմանված ողջ գործիքակազմն օգտագործել ենք:

Իմ կողմից տրվել էր հանձնարարական՝ ևս մեկ անգամ գործընթացը կազմակերպել Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանի ղեկավարությամբ: Հանձնարարել եմ տեխնիկական ավելի համապարփակ բնութագիր կազմելու համար աշխատել առավել մանրակրկիտ: Վերջնական, կարծեմ, որոշվել էր որպես խրախուսանք սահմանել 4-5 միլիոն

դրամ գումար: Կցանկանայի այժմ մրցույթի անցկացման վերաբերյալ տեղեկատվության իրազեկումը կազմակերպել հանրության ավելի լայն շրջանակներում:

Հաշվի առնելով, որ համայնքի կողմից ինչ-որ գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ է հայտարարել մրցույթ, ուստի՝ այդ աշխատանքներն առավել երկարաժամկետ են դառնում: Վերջնական լուծում և գնահատական ունենալու համար հանձնարարական է տրվել նաև «Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի աշխատակազմին: Ամփոփելով, հայտնում եմ Ձեզ, որ աշխատանքներն ընթացքի մեջ են:

Ազատության հրապարակում վարձակալական հիմունքներով գործող խաղերի և հեծանիվների հետ կապված հարցերը կարգավորվում են քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության ու վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի համապատասխան բաժնի կողմից:

Ես որպես հեծանվորդ, մայրաքաղաքի կենտրոնական հատվածներում հաճախակի հեծանիվ եմ վարում և չնայած պահպանում եմ անվտանգության բոլոր կանոնները, բայց հատկապես երեկոյան ժամերին կա վտանգ: Մայթի վրա հեծանվորդն իրավունք չունի հեծանիվ վարել: Ցավոք, քաղաքացիների մեծամասնությունը չեն պահպանում անվտանգության այդ կանոնները:

Արման Անտոնյան

-Պարոն Մարության, խնդիրը կայանում է նրանում, որ վարձակալական հիմունքներով տրվող սարքավորումները տրամադրվում են միայն Ազատության հրապարակի տարածքում շահագործելու պայմանով:

Հայկ Մարության

-Փաստացի վտանգի առկայությունը կա և հարցը քննարկել եմ Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի հետ: Կարծում եմ, շինարարական աշխատանքների մեկնարկով պայմանավորված այդ հարցի լուծումը կտրվի: Բարձրացված հարցի վերաբերյալ իմ կարծիքը հետևյալն է. անընդունելի է նշված հատվածում նման գործունեության իրականացումը:

Արման Անտոնյան

-Առաջարկում եմ Ազատության հրապարակում գործող խաղային սարքավորումները տեղափոխել այլ այգի:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արսեն Կարապետյան:

Արսեն Կարապետյան

-Կարելի է շատ հետաքրքիր մրցույթներ կազմակերպել, քանի որ կան բազմաթիվ նոր ճարտարապետական ընկերություններ և լավ համագործակցության խթան կլինի: Պնդում եմ,

որ դրանից շինանարության գինը շատ չի փոխվի: Կարելի է հստակ գումարային սահման առաջարկել և հետաքրքիր լուծում ակնկալել:

Ինչ վերաբերում է Ազատության հրապարակի բարեկարգման համար հայտարարված նախագծման մրցույթին, ես որպես ճարտարապետ, մրցույթին չեմ մասնակցի, քանի որ լինելով Երևանի ավագանու անդամ՝ ակնհայտ շահերի բախում կա: Իմ ճարտարապետ ընկերները մրցույթին չեն մասնակցում, որովհետև խնդիրը ճիշտ չի դրված: Այսինքն, ճարտարապետական տեսանկյունից մրցութային առաջադրանքը հստակ չէ:

Ճարտարապետական ոլորտի մրցույթների համար կան չափորոշիչներ և շատ կարևոր է նաև մրցութային հանձնաժողովի կազմը: Ուզում եմ տեղեկացնել, որ խնդիրը կապված չէ միայն խրախուսանքի համար սահմանված գումարի հետ: Քննարկումների ժամանակ այս ամենի մասին տեղեկացրել եմ նաև քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությանը: Ես հայտնում եմ իմ պատրաստակամությունը՝ աջակցել այդ աշխատանքներին:

Հայկ Մարության

-Համամիտ եմ Ձեզ հետ, սակայն պետք է լինի նաև համապատասխան ներուժ: Քանի որ այդ աշխատանքների համակարգումը հանձնարարել եմ Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանին, ուստի՝ կարող եք պարոն Վիրաբյանի հետ աշխատել:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սաթենիկ Մկրտչյան, խնդրեմ:

Սաթենիկ Մկրտչյան

-Հարցս վերաբերում է «Ֆիրդուսի» թաղամասին, բայց ոչ այն ենթատեքստով, որ արդեն քննարկվել է մեր նիստի ընթացքում: Ավելի կոնկրետ մի քանի բնակիչների հարցով, կարծում եմ այդ հարցերի ճիշտ լուծմանը հետևողական լինելը նույնպես մեր տիրույթում է:

Մայիսի 20-ին դիմում ենք ստացել Հանրապետության փողոցի նրբանցքի մի խումբ բնակիչներից, այդտեղ 3 ընտանիք, սեփականության իրավունքով, առայսօր ապրում են: Այդ տարածքի մի հատվածն աղյուսե շենքն է, մյուս հատվածը մինչ այդ իրացումները քանդված մի տարածք է, որը որևէ կերպ պատնեշված չէ: Բնակիչներն ամեն օր, թեթև քամու պարագայում, շնչում են այդ քանդված տարածքի օդը:

Այդ տարածքի բնակիչները դիմել են քաղաքապետարան, այստեղից գործը վերահասցեավորել են «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ: Վերջինս նամակն ուղարկել է «Տրապիզոն Քոնսթրաքշն» ՍՊԸ տնօրենին: Բնակիչների խնդրանքն է ընդամենը պատնեշել քանդված տարածքը: Ես կարծում եմ, որ այս մասով քաղաքապետարանը գուցե ունի գործառույթ՝ հասկանալու, թե որքանով է տարածքը

պատնեշման ենթակա: Աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչությունն է երևի դրանով զբաղվում. արդյոք այդտեղ շինհրապարակի կամ քանդման հրապարակի բոլոր նորմերը պահպանվում են, թե ոչ:

Նշեմ, որ խոսել եմ քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության աշխատակցի հետ, Պավել Սարգսյանի հետ հարցը փոխանցել ենք նաև կառուցապատողին, բայց մայիսի 20-ից ի վեր այդ պատնեշը չի կառուցվել: Կարծում եմ, քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության ներկայացուցիչ կարող է այց անել այնտեղ և հասկանալ, որքանով են նորմերը խախտված: Ինչպես նաև ևս մեկ անգամ կառուցապատողին հորդորենք, որ հնարավորինս շուտ իրականացնի այդ աշխատանքը, որովհետև դա մեծ ջանքեր չի պահանջում:

Ինչքանով է այս հարցը մեր տիրույթում, իմ խնդրանքն է ևս մեկ անգամ հասկանալ, արդյոք այդտեղ ինչ-որ խախտում կա, թե ոչ և մենք չենք կարո՞ղ այդ պատնեշները կառուցել, որպեսզի բնակիչները չշնչեն այդ փոշին:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Սեդոյանը:

Անդրանիկ Սեդոյան

-Նախորդ շաբաթ կայացած քննարկման ժամանակ ՀՀ կառավարության ներկայացուցիչ պարոն Սիսեռյանը բավականին հանգամանալից ներկայացրեց բոլոր այն հանգամանքները, որի արդյունքում կառուցապատումն իրականացվում է: Կցանկանամ անդրադառնալ միայն շինհրապարակներին: Հաշվի առնելով, որ «Ֆիրդուսի» թաղամասի ծրագրով նախատեսված այդ ամբողջական տարածքի սահմաններն ահռելի մեծ են, շատ անկանոն կերպով է իրականացվում քանդման աշխատանքները: Նկատի ունեմ ոչ թե չհամակարգված, այլ այն տարածքներում են իրականացվում քանդման աշխատանքները, որոնք արդեն իսկ իրացված են: Հետևաբար, քննարկվել է նաև այդ տարբերակը՝ շինհրապարակ որպես այդպիսին դիտարկել, հաստատել: Սակայն, հաշվի առնելով, որ գույքերը շատ բազմազան են, տարանջատված են, կան նաև բնակելի տներ, այդ առումով, ըստ կառուցապատողների և նախագծողների, չի ստացվում ձևավորել հստակ շինարարական հրապարակ: Այն ակամայից կարող է խոչընդոտ հանդիսանալ տվյալ բնակիչների տեղաշարժի և այլ խնդիրների հետ կապված, այսինքն կարող է որոշակի սահմանափակումների հանգեցնել:

Ինչ վերաբերում է վտանգին կամ կենսագործունեության մասին խնդիրներին, ես կարծում եմ, որ այդ հարցը տրամաբանության սահմաններում է և հնարավոր է կառուցապատողի հետ հարցին լուծում տալ: Կարծում եմ աշխատակազմի վերահսկողության վարչությունը ևս կարող է այս հարցով զբաղվել: Ինքս կարող եմ նաև խնդրի մասին տեղեկացնել ներդրողներին, տեսնենք ինչպես կարելի է այդ հարցը կարգավորել:

Հայկ Մարության

-Պարոն Սեդոյան, կխնդրեմ հարցը քննարկել նաև քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետ պարոն Դարբինյանի հետ:

Տիկին Մկրտչյան, կխնդրեմ Ձեզ նյութը փոխանցել պարոն Սեդոյանին:

Անդրանիկ Սեդոյան

-Տիկին Մկրտչյան, խնդրում եմ, ավելի ստույգ հասցեի վերաբերյալ տեղեկատվություն տալ, տեղադիրքի մասով, ըստ այդմ հարցը կկարգավորենք:

Սաթենիկ Մկրտչյան

-Երկրորդ հարցս վերաբերում է Ալիխանյան եղբայրների փողոցի վրա կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքին: Երբ եղել է քաղաքաշինական խորհրդի քննարկումը, ինչպե՞ս է տեղի ունեցել փաստաթղթերի կազմումը: Այդ փաստաթղթերի մեջ արդյոք որպես փաստաթղթային փաթեթի մաս կազմել են քաղաքապետարան մուտքագրված բազմաթիվ նամակները, այդ թվում՝ 500 բնակչի ստորագրությունները: Այս հարցից բխող մյուս ավելի գլոբալ հարցը. ինչպե՞ս է տեղի ունենում քաղաքաշինության խորհրդին ներկայացվող խնդիրները: Ինչպե՞ս է ստացվում, որ կառուցապատողն ունի ամբողջական ներկայություն, բայց այս դեպքում, եթե նախապատմության մեջ կա նաև բնակիչների կողմից բազմաթիվ անգամ հարցի հնչեցում, չի դառնում քննարկման առարկա: Սա ես ընդհանուր եմ ասում, բայց այս դեպքում ցանկանում եմ իմանալ այդ 500 ստորագրությունները եղե՞լ են փաթեթի մաս, թե ոչ:

Հայկ Մարության

-Այս նախագիծը քաղաքաշինական խորհուրդ է ներկայացվել միայն այն պատճառով, որ այն այսպիսի հնչեղություն է ստացել: Քաղաքաշինական նորմերի առումով այս նախագիծը բացարձակ խնդիր չունի, եթե այս մարդը դիմեր դատարան մեկ տարի առաջ, դատարանի որոշմամբ կարող էր պահանջել և՛ ճարտարապետահատակագծային առաջադրանքը, և՛ շինթույլտվությունը: Դա փաստեցին բոլորը, այսինքն ակնհայտ բոլոր նորմերը պահպանված են, բայց տվյալ անձը չի ընտրել դատական ճանապարհը, այլ մինչև վերջ համագործակցել է համայնքի հետ, բոլոր պայմանների հետ համաձայնվել է:

Սաթենիկ Մկրտչյան

-Ես ցանկանում եմ իմանալ, այդ 500 ստորագրությունների խնդիրն արձանագրվել է արդյոք խորհրդի քննարկումների ժամանակ:

Հայկ Մարության

-Խորհրդի քննարկման ժամանակ դա պետք չէ, դա քաղաքաշինական խորհուրդ է:

Հարցին կանդրադառնա քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Սեդոյանը:

Անդրանիկ Սեդոյան

-Նշված կառուցապատման հարցը երկու անգամ է ներկայացվել քաղաքաշինական խորհրդի նիստին: Առաջինը՝ դրվել է հանրային լսում իրականացնելուն հավանություն տալու վերաբերյալ, այսինքն չի քննարկվել ճարտարապետական լուծումները: Տվյալ նախագիծը, եթե քաղաքաշինական առումով ընդունելի չլիներ, այն չէր ներկայացվի հանրային լսումների: Քաղաքաշինական խորհուրդը հավանություն է տվել հանրային քննարկում անցկացնելու հարցին, որի ժամանակ, ինչպես պարոն Մարությանը նշեց, հստակ բարձրաձայնվել է՝ քանի որ բնակիչների կողմից բազմաթիվ ստորագրություններ կան, այդ նպատակով ակնկալում ենք իրականացնել հանրային լսում:

Տիկին Մկրտչյան, ևս մեկ անգամ ցանկանում եմ նշել, որ այն հարցերը, որոնք բարձրաձայնվեցին հանրային լսման ժամանակ, բնակիչները պարզաբանեցին, որ դա զուցե կողմնակալ մոտեցում է: Այսինքն, չսպասեցին լսել այն արձագանքը, թե ինչ համատեքստում է արվում կամ կայացվում որոշում: Իրենք ունեին մոտեցումներ, որ տվյալ տարածքում արևը կփակվի, չեն ցանկանում այդտեղ լրացուցիչ որևէ բան, այլևս չմանրամասնեմ: Ցանկանում եմ ևս մեկ անգամ նշել, որ այո՛, բոլորը տեղյակ են եղել բողոքների քանակից:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, ավարտվեց հարց ու պատասխանը, ավագանու հարգելի անդամներ, Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 5-րդ նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Կազմեց՝ Ա. Եփրիկյան